

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	3
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ՓՈԽԱՐԺԵՔ	6
4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	7
4.1. Բյուջեի եկամուտները	7
4.2. Բյուջեի ծախսերը	9
4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	9
4.4. Պետական պարտք	10
5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Գնաճ	11
5.2. Ավանդներ	12
5.3. Վարկեր	13
6. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	15
7. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


2021 թվականին ՀՀ տնտեսության իրական աճը կազմել է ընդամենը 5.7%, ընդ որում, այդ աճը գրանցվել է ճգնաժամային 2020թ. համեմատ: Իսկ «բնականոն» տարվա՝ 2019թ. համեմատ ՀՀ տնտեսությունն իրական արտահայտությամբ նվազել է 2.2%-ով, ինչը նշանակում է, որ 2021թ. վերականգնում տեղի չի ունեցել: Այս պայմաններում, 2022թ. սկսվել է բավական բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշով: Վերջինս կազմել է 15.4%՝ գերազանցելով ինչպես 2020թ. հունվարի (երբ դեռևս համավարակի ազդեցությունները չէին հասել Հայաստան), այնպես էլ 2019թ. հունվարի ցուցանիշները: Սակայն, պետք է նշել, որ 2021թ. սկզբում տնտեսությունը դեռևս չէր սկսել վերականգնումը և տնտեսական ցուցանիշները զգալիորեն անկում էին գրանցել 2020թ. համեմատ: Ավելին, նախորդ տարվա սկզբում առկա էր քաղաքական լարվածություն և տնտեսական գործակալների շրջանում ապագայի նկատմամբ անորոշության բարձր աստիճան: Այդ գործոնները պետք է հաշվի առնել՝ ինչպես 2022թ. հունվարի, այնպես էլ հաջորդող ամիսների մակրոտնտեսական ցուցանիշները վերլուծելիս:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվարի ՏԱՑ-ի աճին տնտեսության բոլոր ճյուղերն ունեցել են դրական նպաստում, ընդ որում, արդյունաբերության, ծառայությունների և առևտրի ոլորտները գրեթե նույն չափով են նպաստել տնտեսական ակտիվությանը՝ համապատասխանաբար 4.4-ական և 4.3 տոկոսային կետով: Շինարարության ոլորտի նպաստումը եղել է բավական փոքր՝ շուրջ 0.2 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվարին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն


Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում գրանցվել է բավական բարձր՝ շուրջ 16.6% աճ: Այս դեպքում բազայի էֆեկտի ազդեցությունը զգալիորեն մեծ է, քանի որ նախորդ տարի հունվարին արդյունաբերությունը նվազել էր 10.8%-ով: Սակայն, պետք է նշել, որ արդյունաբերության նման բարձր աճը կապված է նաև հանքարդյունաբերության աճի հետ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է պղնձի միջազգային գների աճով, որոնք 2022թ. հունվարին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են շուրջ 23.0%-ով: Արդյունաբերության աճի գործոնների վերաբերյալ առավել հստակ հնարավոր կլինի նշել ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ՀՀ ՎԿ հրապարակումից հետո (ինչը կներառվի հաջորդ ամսվա ՍԱՑ-ի տեղեկանքում):

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ծավալները աճել են շուրջ 3%-ով: Շինարարության ծավալները նախորդ տարի անկում չէին գրանցել, հետևաբար բազայի էֆեկտի դերը բացակայում է: Շինարարության համար հունվար ամիսը համարվում է համեմատաբար պասիվ ամիս, հետևաբար արձանագրված 3% աճը հուսադրող է՝ տարվա ընթացքում ավելի բարձր ցուցանիշի արձանագրման տեսանկյունից: Միաժամանակ, նախորդ տարվա ապրիլին շինարարության ծավալների կտրուկ աճը կարող է ծառայել որպես խոշոր բազա, որի համեմատ ներկա տարում կարող է գրանցվել շինարարության աճի տեմպի դանդաղում:

1.3. Ծառայություններ


Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Հունվարին գրանցվել է ծառայությունների զգալի աճ: 2021թ. հունվարին երկրում տիրող բացասական բարոյահոգեբանական վիճակի պայմաններում զգալի նվազել էր ծառայությունների ոլորտը: Այդ իրավիճակի համեմատ, 2022թ. գրանցվել է ծառայությունների շուրջ 21.2% աճ: Ծառայությունների աճին նպաստող ենթաոլորտների վերաբերյալ տեղեկատվություն նույնպես հասանելի կլինի ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ՀՀ ՎԿ հրապարակումից հետո, ինչը նույնպես կներառվի հաջորդ ամսվա ՏԱՑ-ի տեղեկանքում:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում արձանագրված աճը բացարձակ արժեքով ավելի ցածր է, քան նախորդ տարվա անկումը: Հունվարին գրանցվել է առևտրի ծավալների շուրջ 11.5% աճ, մինչդեռ նախորդ տարվա անկումը կազմել էր 14.2%: Դա նշանակում է, որ առևտրի ծավալները դեռևս չեն վերականգնվել:


2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Ապրանքների արտահանման ծավալը կտրուկ աճել է: 2022թ. հունվարին արտահանվել են շուրջ 53.2%-ով ավելի շատ ապրանքներ, քան նախորդ տարվա նույն ամսում: Արտահանման կառուցվածքը դեռևս չի հրապարակվել, սակայն նախնական տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ արտահանման աճը մեծամասամբ պայմանավորված է պղնձի միջազգային գների աճի հաշվին հանքարդյունաբերության արտադրանքի արտահանման աճով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %




Ներմուծման ծավալները նույնպես զգալի աճ են գրանցել: Ներմուծման աճը, ինչպես ծառայությունների և առևտրի դեպքում, արտացոլում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սպառման և պահանջարկի որոշակի վերականգնումը: Սակայն, նույնիսկ այդ պարագայում, աճը բավական բարձր է: Այն գերազանցում է արտահանման աճի տեմպին, ինչը նշանակում է, որ

նույնիսկ արտահանման բարձր աճի պարագայում, առևտրային հաշվեկշիռը վատթարացել է:

3. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 9. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%), աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և անվանական փոխարժեքը (դրամ)



2022թ. հունվարին ՀՀ դրամը զգալիորեն արժևորված է նախորդ տարվա նույն ամսվա համեմատ: Այսպես, ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվարին կազմել է 482 դրամ՝ 2021թ. հունվարի 521 դրամի փոխարեն արժևորվելով շուրջ 8.1%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը կազմել է 15.9%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 10.9%: Փոխարժեքի արժևորումը կարող


է վնասել ՀՀ տնտեսության մրցունակությանը, ինչն արդեն իսկ արտացոլվել է առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ:

4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ¹

4.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը զգալիորեն զիջում է տնտեսական ակտիվության աճին: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվարին աճել են ընդամենը 10.1%-ով: Հարկային եկամուտների աճը կազմել է 10.5%, այն դեպքում, երբ ՏԱՑ-ը կազմել է 15.4%, իսկ գների աճը՝ 7.1%: Իհարկե, հունվարին վճարվող հարկերը մեծամասամբ կապված են նախորդ տարվա դեկտեմբերի տնտեսական ակտիվության հետ, սակայն 2021թ. դեկտեմբերին նույնպես անվանական տնտեսական ակտիվությունը ավելի բարձր աճ է գրանցել՝ 9.9% ՏԱՑ-ի և 7.7% գնաճի շնորհիվ: Հետևաբար, հարկերի նման ցածր աճը առնվազն մտահոգիչ է: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվարին աճել են 12.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները կրճատվել են շուրջ 53.9%-ով:

Գծապատկեր 10. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է պետական տուրքի (աճը՝ շուրջ 4 անգամ), ակցիզային հարկի (աճը՝ 76.0%) և ԱԱՀ-ի (աճը՝ 7.2%) գծով հարկային մուտքերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.8, 4.9 և 2.8 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին շուրջ 5.1 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել

¹ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:


բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով հարկային մուտքերի նվազումը: Վերջինիս գծով ՊԵԿ-ն իրականացրել է գումարների հետվերադարձ, ինչի արդյունքում հարկային մուտքերը նախորդ տարվա 1.0 մլրդ դրամից դարձել են -5.6 մլրդ դրամ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար		2022թ. հունվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-11.1	-11.1	10.5	10.5
ԱԱՀ	-2.8	-1.0	7.2	2.8
Շահութահարկ	-50.3	-3.6	-7.0	-0.3
Եկամտային հարկ	1.7	0.5	-5.4	-1.9
Ակցիզային հարկ	-47.5	-5.2	76.0	4.9
Շրջանառության հարկ	-18.5	-1.0	29.3	1.5
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-51.3	-0.7	-	-5.1
Մաքսատուրք	-8.7	-0.3	24.8	0.9
Սոցիալական վճար	54.8	0.8	51.0	1.3
Այլ հարկային եկամուտներ	-5.4	-0.1	71.1	1.5
Պետական տուրք	-27.2	-0.5	314.3	4.8

4.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Ի տարբերություն հարկային եկամուտների համեմատաբար ցածր աճին՝ պետական բյուջեի ծախսերը գրանցել են զգալի աճ: Այսպես, 2022թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են շուրջ 25.8%-ով՝ կազմելով 88.7 մլրդ դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերն աճել են 16.8%-ով և ապահովել են ընդհանուր ծախսերի 16.6 տոկոսային կեստ աճը, իսկ կապիտալ ծախսերն աճել են շուրջ 9 անգամ (բարձր աճը բացատրվում է նախորդ տարվա հունվարին կապիտալ ծախսերի խիստ ցածր մակարդակով)՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 9.1 տոկոսային կեստով:

4.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-)), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Պետական բյուջեն եղել է հավելուրդային, որի չափը, սակայն, եղել է ավելի փոքր, քան նախորդ տարի: 2022թ. հունվարին պետական բյուջեից կատարված ծախսերի ծավալը եղել է ավելի փոքր, քան բյուջեի եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ 61.0 մլրդ դրամի չափով:

4.4. Պետական պարտք

2022թ. հունվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,282.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճելով 15.7%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 8,812.1 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 17.1%-ով: Պարտքի աճը պայմանավորված է և՛ ներքին, և՛ արտաքին պարտքի աճով, սակայն ներքին պարտքի աճը ունեցել է առաջանցիկ տեմպ՝ կազմելով 34.3%՝ արտաքին պարտքի 11.1% աճի դիմաց:

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը 2022թ. հունվարին շարունակել է մնալ բարձր մակարդակում՝ կազմելով 9.0%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը որոշակի անկում է գրանցել՝ 2021թ. դեկտեմբերի 9.7%-ից 2022թ. հունվարին դառնալով 8.1%:


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Գնաճ


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի բարձր տեմպը դեռևս պահպանվում է: Չնայած ՀՀ կենտրոնական բանկի արձագանքին, որը դրսևորվել է 2021թ. ընթացքում մի քանի անգամ տոկոսադրույքների բարձրացմամբ, գնաճի տեմպը շարունակում է մնալ ԿԲ թիրախից զգալիորեն բարձր: Այսպես՝ 2022թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ սպառողական գները աճել են 7.1%-ով, ընդ որում, 2021թ. դեկտեմբերի համեմատ գների աճը կազմել է 1.6%: Դա նշանակում է, որ գների աճը շարունակվում է, ինչը կարող է հանգեցնել բնակչության իրական եկամուտների հետագա նվազմանը, եթե անվանական աշխատավարձերի համապատասխան աճ տեղի չունենա:


5.2. Ավանդներ

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. հունվարին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը եղել է բավական բարձր՝ հիմնականում պայմանավորված ռեզիդենտների ավանդների աճով: 2022թ. հունվարի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 13.9%-ով: Ավանդների աճը ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 19.1% աճով, մինչդեռ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալը նվազել է 1.1%-ով: Հարկ է նշել, սակայն, որ ոչ ռեզիդենտների ավանդները 2022թ. հունվարին 2021թ. դեկտեմբերի համեմատ աճել են շուրջ 2.0%-ով, մինչդեռ ռեզիդենտների ավանդները նվազել են՝ շուրջ 0.4%-ով:

Գծապատկեր 16. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 7.6 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել տնային տնտեսությունների ավանդների աճը, իսկ ձեռնարկությունների ավանդներն աճել են 29.1%-ով և ընդհանուր ավանդների աճին նպաստել 5.0 տոկոսային կետով:

5.3. Վարկեր


2022թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ վարկերի ծավալները նվազել են, սակայն 2021թ. դեկտեմբերի համեմատ նկատվում է որոշակի աճ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 2.2%-ով: Սակայն, 2021թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալն աճել է 0.9%-ով:

Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են առաջանցիկ տեմպով՝ շուրջ 17.9%-ով և ընդհանուր վարկերին ունեցել 1.0 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են 1.2%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել 1.1 տոկոսային կետ բացասական նպաստում:

Գծապատկեր 18. Ռեզիդենտներին տրամադրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց վարկերի շուրջ 6.1%-ով նվազմամբ, որի նպաստումը ռեզիդենտների ընդհանուր վարկերին կազմել է -3.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի² ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են

² Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի


ունեցել հիփոթեքային և շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնք ընդհանուր վարկերի աճին ունեցել են համապատասխանաբար 4.5 և 1.3 տոկոսային կետով դրական նպաստում: Գյուղատնտեսության ոլորտի վարկերը նույնպես ունեցել են դրական նպաստում ընդհանուր վարկերի աճին, որը կազմել է 0.6 տոկոսային կետ: Մնացած վարկերը ընդհանուր վարկերի աճին ունեցել են բացասական նպաստում:

6. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի նոր դեպքերը կտրուկ աճել են 2022-ին, սակայն մահացության դեպքերը համեմատաբար ցածր մակարդակում են: 2022թ. հունվարին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 738, իսկ փետրվարին կտրուկ աճել է՝ հասնելով 2040-ի: Մահացության դեպքերը դեռևս ցածր են և փետրվարին միջին հաշվով կազմել են օրական 14 դեպք:

Աշխարհի մյուս երկրների հետ համեմատության մեջ ՀՀ-ում տիրող իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է: Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով փետրվարի 25-ի դրությամբ Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 79-րդ տեղը՝ նախորդ ամիս զբաղեցրած 76-րդ տեղի փոխարեն, սակայն մահվան դեպքերի թվով շարունակում է զբաղեցնել 19-րդ տեղը:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2022թ. փետրվարի 25-ի դրությամբ

մանրամասնվում: Այդ պատճառով, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները մի դեպքում նվազում են 1.2%-ով, իսկ մյուս դեպքում՝ 2.4%-ով:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2021թ. վերականգնման ցածր տեմպից հետո 2022թ. հունվարին գրանցվել է բարձր տնտեսական ակտիվության աճ, որը, սակայն, զգալի չափով պայմանավորված է բազայի էֆեկտով: Նախորդ տարվա տարեսկզբին ՀՀ տնտեսությունը բնութագրվում էր լարված քաղաքական իրավիճակով և բարձր անորոշություններով: Այդ իրավիճակի համեմատ, ընթացիկ տարում գրանցվել է բարձր տնտեսական ակտիվության աճ՝ հիմնականում ծառայությունների վերականգնմամբ, ինչպես նաև պղնձի բարձր գների հետևանքով հանքարդյունաբերության աճով պայմանավորված: Սակայն, պետք է հիշել, որ բազայի էֆեկտն աստիճանաբար չեզոքանալու է՝ հանգեցնելով ՏԱՑ-ի աստիճանական դանդաղմանը: Բացի այդ, վերջին օրերին ծավալվող իրադարձությունները, կապված ռուս-ուկրաինական պատերազմի հետ, անկասկած զգալի բացասական ազդեցություն կունենան ՀՀ տնտեսության վրա՝ վատթարացնելով տնտեսական ցուցանիշները: Հետևաբար, կառավարությունը պետք է նախօրոք քայլեր ձեռնարկի սպասվող արտաքին շուկերին արձագանքելու և տնտեսական ակտիվության բարձր տեմպը պահպանելու ուղղությամբ:

2. Հարկային եկամուտների աճը չի համապատասխանում տնտեսական ակտիվության աճին, ինչը մտահոգիչ է: 2022թ. հունվարի հարկային եկամուտների աճը կազմել է 10.5%, մինչդեռ անվանական ՏԱՑ-ը կազմել է շուրջ 23.6% (15.4% ՏԱՑ-ի և 7.1% գների աճի պայմաններում): Եթե հաշվի առնենք, որ հունվարի հարկման բազան հիմնականում կապված է նախորդ տարվա դեկտեմբերի տնտեսական ակտիվության հետ, ապա այդ պարագայում նույնպես հարկային եկամուտների աճը հետ է մնում տնտեսական ակտիվության աճից, քանի որ 2021թ. դեկտեմբերին անվանական տնտեսական ակտիվության աճը կազմել է շուրջ 18.4% (9.9% ՏԱՑ-ի և 7.7% գների աճի պայմաններում): Ընդ որում, 2022թ. հունվարի հարկային եկամուտների աճին զգալի նպաստում է ունեցել պետական տուրքի աճը, որն օրենսդրական փոփոխության հետևանք է և պետք է հանդիսանար հարկային եկամուտների՝ տնտեսական ակտիվությունից առաջանցիկ տեմպերով աճի գործոն: Այս ամենը ցույց է տալիս, որ առկա է հարկային վարչարարության վատթարացման միտում (ինչը նաև արձանագրել էինք նախորդ ամիսների տեղեկանքներում), որը շտկելու համար պահանջվում է կառավարության կողմից անհրաժեշտ գործողությունների ձեռնարկում:

3. Գների աճի բարձր տեմպը պահպանվում է: Չնայած ՀՀ կենտրոնական բանկի արձագանքին՝ գնաճի տեմպը շարունակում է մնալ ԿԲ թիրախից զգալիորեն բարձր: Այսպես, 2022թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ սպառողական գները աճել են 7.1%-ով, ընդ որում, 2021թ. դեկտեմբերի համեմատ գների աճը կազմել է 1.6%: Հետագա ամիսներին

իրավիճակը կարող է ավելի վատթարանալ, քանի որ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով կտրուկ բարձրացել են էներգակիրների գները, ինչը բնականաբար կհանգեցնի միջազգային շուկաներում գնաճի արագացմանը: Վերջինս կփոխանցվի նաև ՀՀ տնտեսություն՝ ավելի արագացնելով գնաճի տեմպը: Բացի այդ, գնաճի արագացման մեկ այլ գործոն կարող է լինել ՀՀ դրամի արժեզրկումը, ինչը կարող է տեղի ունենալ ՌԴ ռուբլու արժեզրկման պայմաններում: Հետևաբար, այստեղ նույնպես, անհրաժեշտ է քաղաքականություն իրականացնող մարմնի, այս դեպքում՝ ՀՀ ԿԲ-ի, առաջանցիկ գործողությունների իրականացումը՝ ապագա շուկերի ազդեցությունները հնարավորինս նվազեցնելու նպատակով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: